

ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՎ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱՋԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՆՁՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ՊԱՐՈՆ ՆԱԳՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Մեզ համար մեծ հաճույք է շնորհավորել Ձեր նոր տարին և մաղթել Ձեզ ամեն բարիք ու փայլուն հաջողություններ՝ Ձեր հայրենանվեր գործերին:

Մաղթում ենք նաև ի սրտե, որ նոր տարին լինի փառավոր նվաճումներով լի մի տարի մեր վերածնված Մայր Հայրենիքի համար և խաղաղության տարի ամբողջ աշխարհի համար:

ՎԱՋԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ՊԱՐՈՆ ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հանուն Հայաստանյայց Եկեղեցու, սիրով շնորհավորում ենք նոր տարին և մաղթում ենք Ձեզ և մեր հայրենի հարապատ կառավարության բոլոր անդամներին աննկուն եռանդ ու շինարար ոգի, որպեսզի է՛լ ավելի հզորանա ու ծաղկի մեր Մայր Հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, բարօրության և խաղաղության մեջ:

Մաղթում ենք նաև, որ համայն աշխարհի համար նոր տարին լինի բարեկամության և խաղաղության տարի:

ՎԱՋԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՈՐԾԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՄԵԾԱՀԱՐԳ ՊԱՐՈՆ Կ. ԴԱՎԼԱԹՅԱՆԻՆ

ԵՐԵՎԱՆ

Հաճեցեք ընդունել Մեր ջերմագին շնորհավորանքները և բարեմաղթությունները նոր տարվա առիթով անձամբ Ձեզ և Ձեր գործակիցներին: Մաղթում ենք, որ նոր տարին լինի խաղաղության, բարօրության և նոր հաջողությանց տարի համայն ժողովրդի համար:

Սիրով և ողջունիվ,

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ Ա-ԻՆ

ԷՋՄԻԱԾԻՆ

Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության և անձամբ իմ անունից ջերմորեն և սրտագին շնորհավորանքներ եմ հղում Ձեզ նոր տարվա առթիվ:

Ցանկանում եմ առողջություն և արգասավոր գործունեություն Ձեր հայրենանվեր ջանքերում:

Ընդունեցե՛ք իմ խորին շնորհակալությունը Ձեր շնորհավորանքների և բարի մաղթանքների համար:

Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի
նախագահության նախագահ

ԵՐԵՎԱՆ

Խորին շնորհակալություն եմ հայտնում նոր տարվա առթիվ Ձեր հղած շնորհավորանքների և բարեմաղթությունների համար:

Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի և անձամբ իմ կողմից սրտանց շնորհավորում եմ Ձեր նոր տարին: Ցանկանում եմ Ձեզ քաջառողջություն և անսպառ կորով: Թո՛ղ նոր տարին ամբողջ աշխարհում լինի ամրակուռ խաղաղության տարի, մեր հայրենիքի բարգավաճման և առաջադիմության տարի:

Ա. ՔՈՉԻՆՅԱՆ
Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետի նախագահ

ԵՐԵՎԱՆ

Հաճեցեք ընդունել Խորհրդիս և անձամբ իմ շնորհավորանքները նոր տարվա առթիվ:

Ցանկանում ենք Ձեզ քաջառողջություն և հաջողություն: Թո՛ղ նոր տարին լինի մեր ժողովրդի և հողագնդի բոլոր ժողովուրդների համար խաղաղության և բարեկամության տարի:

Կ. ԴԱՎԼԱԹՅԱՆ
Հայկական ՍՍՌ Մինիստրների սովետին առընթեր
Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ

ԵՐԵՎԱՆ